

մը կապել անոր համար: Հ. Սարեան վարդապետ յայտնաբերէս ցոյց կուտար, որ ընդդիմութիւն չունի այս մասին, բայց կ'առօարկէր, որ Վարուժանը լիկիտոսական շրջանին ամբողջովին հետեւած չէ, թէ քննութիւնները ամբողջովին տուած չէ. եւ թէ կարելի չէր վարժարանական սկզբունքները ոտնակոխ ընել:

Մեծաւորին այլ գիտողութիւնները շատ իրաւացի էին. այսուհանդերձ ամէն օրէնք գարտուղութիւնը ունի, գարտուղի ստղանդի կերտոյթ մըն էր Վարուժանը, որով շատ իրաւացի էր գարտուղութիւն մ'ընել անոր: Մեծաւոր վարդապետին ես դարձեալ կրկնեցի իմ խնդրանքս: Վարժարանին այլ յարգելի վարչապետը, թէեւ շատ աստուածասէր էր, բայց եւ ոչ նուազ սխառասէր մը. ես սխալաբոյն սրտին այլ փախուցի շարերը. ըսի իրեն, որ մեր վարժարանը սկիզբէն մինչեւ ցարդ ոչ մէկ գործադէտ համարարանական աշակերտ տուած է ազգիս. ըսի, իրեն՝ որ գործադէտ համարարանական մը վարժատրելը, ազգային գրականութիւնը վարժատրել է: Փաստերով ցոյց տուի իրեն, որ Վարուժանին մէջ ծնած է արդէն այն մեծ ստղանդը, որուն համար սահմանուած բացառիկ թոշակ մը, փառքի ստիկոսովը կը վերադառնայ Մուրատ-Տափալայեան վարժարանի պատմութեան մէջ յաւերժօրէն ասպնելու: Հասկցուցի իրեն, որ մեր վարժարանի մեծաւորներէն ոչ մէկը համարարանի թոշակ մը կապած է գործադէտ աշակերտի մը. խնդրեցի, որ ինքը ըլլայ առաջինը, ինքը տուած ըլլայ ազգին Վարուժանի մը պէս ստղանդաւոր սան մը:

Այս խօսքերու վրայ Հ. Սարեան բոլորովին համոզուեցաւ, սենեակին մէջ սկսաւ ման գալ, ակնոցներուն տակէն աչքերուն ուրախ ժպտը ցոյց տուաւ, ձեռքերը շփեց, եւ լսաւ ինձի, որ այս մասին խօսիմ նաեւ Ս. Ղազարի ուսումնական ժողովի անդամներուն հետ, եւ զանոնք ալ համոզեմ: Իր ըսածը կատարեցի:

Այս դիմումս երբ արդէն գրեթէ յաջողուած էր, ժամ մը վերջը, էտիրնեցի աշակերտ մը սենեակս մտաւ, եւ ինձի իմացուց, որ Վարուժանը ըսած է, որ, թէեւ ես չկարենամ իրեն համար համարարանական թոշակ մը ապահովել, որոշած է կօշկակար ըլլալ:

Այլեւս այս ծայրայեղ միջոցներուն դիմե-

լու վտանգ չկար: Վարուժան յորդորներու անսարով՝ մեծաւորին իր խնդրանքը անձամբ յայտնած էր. եւ ան իր կարգին գիմած էր Ս. Ղազարի ուսումնական ժողովի անդամներուն: Այլ առաջարկը իրայօժար ընդունուեցաւ: Վարուժան մէկ ամիս վերջը արդէն Կան հաստատուած, կը յաճախէր համարարան, գրականութեան դասընթացքին եւ քաղաքական ու տնտեսագիտական գիտութեանց կը հետեւէր վանդանաւորացիս:

* * *

Մէկ քանի ամիս վերջը, 1906-ի մարտի 5-ին Վարուժանէն ստացայ հետեւեալ նամակը.

«Սիրելի վարդապետ,
Վեր. Հ. Ս. Երեմեան»

«Յերկար լռեցի: Եւ հիմա որ կը գրեմ՝ բընազգական քաղցր ուժ մըն է զիս մղողը: Միթէ կարելի՞ է մտածել, որ երեք ամսուան այն սիրտիւր եւ բարեխար կենտրոնութիւնը՝ սրտի կրնայի այսպէս դիւրաւ մատնել ժամանակի թեւերուն:

«Արդ՝ ժամն է, այլեւս յիշատակներու վերակոչումով բաւական հասուն եւ բոցալառ, եւ ես, ինչպէս թէ դէմ գիմաց՝ գձեղ կ'ողջունեմ նախ իբրեւ սիրելի բարեկամ մը, եւ յետոյ կը համբուրեմ Ձեր սուրբ աջը՝ իբրեւ հօր մը, որ չլլացաւ ձեռքէն նկածը ընելու ապագայիս բարեկալութեանը համար:

«Ես՝ եթէ ոչ բոլորովին, բայց մասամբ կ'անդիտանամ, թէ ի՛նչ կոյր մըրիկ յուզեց Ձեր վիճակը, ինչո՛ւ թողուցիք պաշտօնը, եւ մանաւանդ ինչո՛ւ կը բնակիք Բատուա եւ ի՛նչ նպատակով: Եթէ բան մը կրնամ ընել՝ այն է մաղբել (այս բառը Ձեզ համար իբրեւ ֆորմիլ չեմ գործածեր) մաղթել աւելի երջանիկ օրեր չեւ աւելի յաղթական Ձեր սկզբունքներուն մէջ, որոնց դէմ դժբախտաբար եղջիւր ցցողներ չեն պակսիր:

«Գարով իմ կացութեանս՝ որչափ որ կարենամ համառօտ կը բացատրեմ Ձեզ, գիտնալով որ այսօր կը հետաքրքրուիք զայն գիտնալու, քանի որ օր մը անոր բարեկալութեանը համար մտածեցիք:

«Հիմա դուցէ՛ զարմանաք, երբ լսեմ, թէ